

Բարումակէ խաչին սրբոյ, աւաղ,  
Տեսիլ քոյին սուրբ աթոռոյ  
Ի լերինըն Սիմայ այլ էր, աւաղ, այլ էր  
Ձի ի վերայ ամպոյ սայլէր սայլէր սայլէր,  
Ի իւսեկով պըսակ լի փըշով,  
Շրջապատեալ զորդոյս զլիսով, աւաղ,  
Ձտեսիլ զլիսոյդ ամենագով.  
Հարսն երգէին երգելով, այլ էր, աւաղ, այլ էր  
Ձի կիսագեան ոսկով փայլէր փայլէր փայ-  
թօթափի լոյս արեգական [լէր...  
Մահումար քոյին ամալարտական, աւաղ,  
Որ ի ծնունդ քո կուսական  
Յնծովիւն վեցականայլ էր, աւաղ, այլ էր  
Ձի ի բարձանց աստղըն փայլէր փայլէր  
Ի յաջըս քոյ ամփոփեցեալ [փայլէր...  
Մայրըս դիտէ աղէկիզեալ, աւաղ,  
Ազնիւ ակունք քո մերկեցեալս  
Ի մերթողեան հարսին այլ էր, աւաղ, այլ էր  
Ձի լուացեալ կաթամբ փայլէր փայլէր փայ- [լէր,  
Ի ձեռըս քո փոխան վարդի  
Դընի բեւեռ կըսկըծալի, աւաղ,  
Տեսիլ մատանցդ հրաշալի  
Յերգոց երգոյն գովելի այլ էր, աւաղ, այլ էր  
Ձի զըմոսոյ ծորմամբ փայլէր փայլէր փայ- [լէր  
Նազելի որդեակ իմ Յիսուս  
Խնայեա՛ ի մօր քոյ արտասուս, աւաղ,  
Տեսիլ մօրըս Մարիամու  
Ի լեռնըն քորեբու այլ էր, աւաղ, այլ էր  
Ձի մորենին վասն իմ փայլէր փայլէր փայ- [լէր,

1. Այսպէս՝ Պ. Յ. Տ. Սիրունի մեկն արամազրած  
ձեռագրին համեմատ (տե՛ս «Բաղմալէպ» Նոյ. 1831,  
էջ 500-2) ուր հաւաքածոն կազմողը, Պօղոս Սեբաս-  
տիան, այսպէս կը ծանօթագրէ Տաղիս մասին.  
«Օրինակեցի ի հոռմ ի Դգմատիոս Վրդ.է Աս-  
տուածատուրեան գորոյ օրինակն յղեաց առ իս  
ըստ խնդրոյ իմոյ յԱմբրոնայէ ի 20 հոկտ. 1821.  
Տաղ խաչելութեան երգեալ ի Յարութիւն վար-  
դապետէ երբեմն երեսփոխանէ (վէրի վարդա-  
պետէ) առ պատրիարքութեամբ Յակոբ պատրի-  
արքի պ-գովոյ Նայեան կոչեցելոյ. յարմարեալ  
ըստ չափու և եղանակի թուրքերէն երգի մանու-  
րստ չափու և եղանակի թուրքերէն էյմիշ, և այլն).  
շակի (Մօր պէնէֆշէ պոյնում էյմիշ, և այլն).  
Սկզբնատառքն կազմեն զանում երգողին Յարու-  
թիւն յորմէ պակասին առ մեզ քանի մի տունը,  
գոր ոչ գտաք ցարդ».

Մենք մենք պիտի բանք թէ զեղեցիկ տաղս ամ-  
բողջապէս կը դանտի մեր վիշնայի Միւիթ. վեր-  
ջապ ամանադարանին թիւ 412 Ձ.ին մէջ (էջ 18ա-  
20ա ըստ Ձ. ցուցակի վիշն. Միւիթարեանց). մեր  
Հ. Իգմատիոս վ. Ա.բեան, որուն կը յայտնէր  
պարակաւ մեր խորին շնորհակալութիւնները  
Վիտիլի է սակայն որ վիշն. Ձ.ը այսպէս ունի  
տաղին վերնագիր. «Տաղ տաղեալ ի Յարութիւն վար-  
դապետէ ի վերայ յարութիւն քորեբու, ի գոյն  
սորա մօտ մէնէմշէմ». Պ. Ս. ի օրինակին «Խաչելու-  
թեան»ը մեզի ստուգադոյն երեւցաւ, ըստ այնմ ալ  
զայն գրինք:

Ասոր կը կցենք տաղ մ'ալ որ ինքին անգին գոհար  
մ'է, հոգելից ներշնչումովը այն տաղերուն որ Նարե-  
կացոյն կ'ընծայուին:

Հիւսումնաբի և օգակաւորութիւն ձեւ որ հոն կայ  
կարծես Գողթան երգերու քոյր կ'ընէ զինք, համակ  
եղանակաւորում, քնքուշ և անոյշ մեղեդի, արուեստի  
զործ մը գուտ արեւելեան թոխի բնոյթով:

Նիւթի և պատկերներու սլարզութիւնը և աւետա-  
րանական անմեղութիւնն է որ հոն կը տիրէ և անոնց  
զարաններովն է որ իսկապէս հոգեկան յազուրդ մը կու  
տայ ուշագիւր բնութեցողին:

Տաղս կը հրատարակեմ մեր Ս. Վ. Թ. 912 զրշա-  
գրէն (էջ 216) որ «Գանձարան և տաղարան մ'է» օ-  
րինակութեամբ ի Փարիզ, 1859ին Հ. Սուքիաս Պարոնեանի  
կողմէ, Փարիզի հայ ձեռագրէ մը՝ որ ըստ նոյն հօր  
վկայութեան՝ գրուած է Յովհաննէս զրշէն ՈճՂ,  
(1241) թուին:

Տաղը խաղերով է (խորտակին):

## ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

(ԽՈՍՐՈՎԱՅԻՆ)

Առաւօտին շաւղի շողըն ծագեալ  
Արեւ տարածեալ.  
Արեւ բարձրը իջեալ արփիւնոյն  
Արփոյն տարփումամբ.  
Արփոյն տարփումամբ և քաղցրիկ  
Յօղիկ արկամէր.  
Յօղ ի հերմոնէ ի վերայ  
Ղերին սիրայնոյ.  
Ղերին սիրայնոյ սէր ի սըմունդ  
Հովիտ շուշանի.  
Հովիտ յօրինեալ մուսխայնոյն  
Կամայք տարփացեալք.  
Կամայք տարփացեալք որ գայք  
Ի համդէս զիշերոյ.  
Համդէս խաչելոյն լոյս զըւարթնոյն  
Ձուարթում հրեշտակին,  
Ձուարթում սերորէն ի վերայ  
Վիւիւն փողերգէր.  
Փողէր գաւետիս Տէր յարեալ  
Դուք գո՛վ խնդրէք.  
Յարեալ անծկալիմ Սիոնի  
Սիրով սիրեցեալ.  
Սէր ողջոյն խանդակաթ սուրբ ոտիցն  
Ներկիր պազանեմք.  
Փառք, մոյս ի մոյս ի մոյս մըմին  
Յաւիտեանս ամէն.

Հր. Հ. Ե. Փ.

- 2, 3, 4. Բ. և Գ. տողերուն գրինք «աւաղ» ներք  
ըստ վ. Ձ. Բ. Պ. Ե. օրինակը չունի «աւաղ».
5. Պ. Ս. օր. «բղբից մայրէր».
6. Այսպէս՝ ըստ Պ. Ս. օրինակին - վ. Ձ. Բ. մէջ  
բոլորովին տարբեր է այդ վերջին երկուողը.  
«Բնդ աման երկնից բողբիցայէր, աւաղ, փայլէր».
7. Ասկից սկսեալ կը պակսի Պ. Ս. բնագիրը.
8. վերնական?

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ Է

Հայը եկող գնացող ազգերու մէջ պահած է իր գեղարուեստի տիպարը

(Շար. տես «Բաղմալէպ» 1932, էջ 52)

Ի՞նչ. Գմբէթաւոր ճարտարապետութեան  
մասին վիճարանող կողմերը, իրենց ցու-  
ցումներն հաստատելու համար, ձեռնար-  
կեցին ամէն ինչ ձուլել սկսիլ, սկիզբն և  
ծագումը փնտռել գմբէթին և անոր դա-  
րաւոր զարգացումին մինչեւ Դ - Ե դար  
Յ. Բ. : Այս հարցին մէջ կարող է մեծ  
ղեւր կատարած ըլլալ նախապատմական  
դարերէն զանազան ազգերու երկրէ եր-  
կիր զաղթականութեամբ տարածուիլ,  
կամ զինու զօրութեամբ և կամ խաղաղ  
տիրապետութեամբ՝ համացեղ և համարին  
ժողովուրդներու միջեւ, որով համարնակ-  
ցութեամբ միաւորուած կամ ձուլուած են  
և կազմուել են իբր նոր ցեղեր, նոր ազ-  
գութիւններ և լցեր են բովանդակ երկրի  
երեսը: Գիտական աշխարհը մեծ հետա-  
բերութեամբ կը հետեւի ցեղաբանական  
և լեզուաբանական գիտութիւններու ար-  
տադրած արդիւնքին, որոնց առատ և ա-  
ռածգական նիւթ կը մատակարարեն նոր  
պեղումները, արձանագրութիւններու  
ընթերցումներն ու ճշտումները, տաւե-  
լապէս առաջաւոր Ասիոյ և Միջագետքի  
մէջ գտնուածները:

Քանի որ գիտնականները զեռ հարուստ  
ասպարէզ ունին մշակելու և զարգացնե-  
լու հնագիտական ուսմանց այլեւայլ ճիւ-  
ղերը, քանի որ կարծիքները զեռ որոշ  
եզրակացութեան մը շուրջ չեն համախո-  
րուած, մենք անտեղեակներս, իբրեւ սի-

րողներ, մատի ծայրով կը փորձենք մօ-  
տենալ այդ երկու գիտութիւններուն՝ աչ-  
քերնիս պահելով միշտ զրաւոր պատմու-  
թեան վրայ, որ իբրեւ ցուպ պիտի օգնէ  
այդ ուսմանց հեղեղատն անցնելու, այն  
չափով, որով կարելի ըլլայ պաշտպանել  
թէ գնացող եկող ազգերու մէջ Հայը  
պահեր է իր գեղարուեստի տիպարը, և թէ  
իր ազգային մշակոյթին հետեւանքն է  
Հայկական ճարտարապետութեան վեր-  
երեւումն այնպիսի երկրի մը և ժողովուր-  
դի մը մէջ, որ աշխարհակալ պետութեանց  
անցեալ փառքն և մեծութիւնն ունեցած չէ:

Մեր նախնիքաց յօդուածին մէջ տե-  
սանք չորս կամ հինգ (եթէ ոչ դեռ աւելի)  
հազար տարիներ առաջ Արիական ցեղը՝  
սկսած Հնդկաստանէն տարածուել է ա-  
ռաջաւոր Ասիոյ վրայ, մինչեւ Յոնիական  
ծովը, Միջագետք և Վերին Ասորիք անցնե-  
լով հասած է մինչեւ Եգիպտոս որ ամենէն  
առաջ օգտուել է Արիական մշակոյթէն.  
ասկից զաղթականներ կ'անցնին Խաւրիա,  
ըստ ոմանց Ետրուրացիք իրենց նշանե-  
աչքերով: Փոքր Ասիայէն կտրելով անցնե-  
լով Հելլեսպոնտոսը՝ կը ձգուին մինչեւ  
Հերակլեան արձաններն Ատլանտեան ուլ-  
կիանոս: Ըստ եգիպտական աւանդութեան  
զոր Պղատոն հասուց մեզի, Սպանիոյ,  
Գաղղիոյ և Միջերկրականի աւազանին  
շուրջը խառնուրդ մը եղած է Ատլանդիտա-  
ներու հետ, և ձեւացեր է Ալպեան կամ



Արմենոյիտներու ցեղը: Հիւսիսէն հոն կը դիմեն սպիտակամորթ արիւնները, որոնք ընդհարուելով Ատլանտեանի ալիքներու հետ, յետագարձ հոսանք մը զիրենք կը դարձնէ սառնապատ երկիրներ, մինչեւ որ հոսանքի ծայրն հասնի Հիմալայեան պատուարներուն: Եւ արդէն ուզէ հեռացած և սրտէ ալ հեռացած եղբայրները կոուրի կը բռնուին իրարու հետ, որ պիտի ունենայ իր բարեբար օգուտները, մանաւանդ Հայ ազգին համար, որոնք իրենց տունը, Սագաշէն, պիտի թողուն և երթան Սպիտակամորթներու (Գերմաններու) երկիրը Սաքսոնեան տունն հիմնելու, որ մեր ժամանակ Եւրոպայի մէջ առաջնակարգ ցեղերու ծնունդ տուած է:

Այսպիսի մեծ գաղթականութեան հոսանքն իր մեծագոյն ազդեցութիւնը գործեր է Հայաստանի բարձրաւանդակին վրայ, որուն ճիւղաւորումները կը ձգուին փոքր Հայք, Կապադովկիա, Պոնտոս, Գամիրք և Եփրատական երկիրները, Մեծ և Փոքր Փոխգիւղ, և Յոնիական ծովի վրայ նայող գաւառները, ի նախնեաց ժամանակէ ասոնք բոլորն ալ եղած են խաշնարած և երկրագործ խաղաղասէր ժողովուրդներ, և իրենց ծագումը կը հանեն մինչև Պեղասգեանը որ նոյնպէս կը յիշուին իբրեւ հովիւ և խաշնարած մի ժողովուրդ:

Ասոնք բոլորը և ուրիշներ ինչ անուան տակ ալ գտնուին և երեւնան մատեաններու կամ արձանագրութեանց մէջ, միշտ համացեղ և զրեթէ համալեզու ծանուցուած են Հայաստանի շուրջն ու մէջը բնակող ժողովուրդի հետ, որ ըստ իր կարգին գաւառական ներքին բաժանումներով բաղկացած միութիւն մը կը կազմէր. զգալի էին լեզուական տարբերութիւններն և տոհմային կապեր: Եթէ կեդրոնական կամ Այրարատեան ցեղապետները կորով և ճարտարութիւն ունեցած չըլլային իրենց ազդեցութեան ենթարկել շուրջ բոլորող գաւառները և հասարակաց հասկնալի մի լեզու կազմել, վաղուց Հայն ալ փոքր Սսիոյ ժողովուրդներուն պէս պիտի անհետանար երկրի երեսէն. որովհետեւ ա-

նոնք Պանուրկեան հօտերու պէս ինքնապաշտպանութեան հասկացողութիւն չունէին, և թշնամին տեսած կամ թէ չտեսած գահավէժ կը թափէին գերութեան զիրկը: Իսկ Հայ ցեղի գաղտնիքն ինչ բանի մէջ էր: Հայը, պէտք է ընդունիլ որ նախապատմական ժամանակներէն սպիտակամորթ արիական (թուրանեան) ցեղի ժամանակաւոր տիրապետութեան ազդեցութիւնը կրած է, անոր երակնեւուն մէջ խաղացեր է հիւսիսային ցեղի մարտական արիւնը, և ընդ նմին հայ բնութեան մէջ խառնուել է ազատասիրութեան հոգին, արժանապատուութեան զգացումները, վառարանի պատուի պաշտպանութիւնը. ասով նա թէ՛ խաշնարած և հողագործ եղած է և թէ՛ դաշտի վրայ անվախ կռուող, հովիւի ցուպի հետ՝ գործածեց սուրը, արօրի խփիի հետ՝ գեղարդն և աղեղը, որով կը հասկնանք Հայկի, Արամի և Տիգրանի յաղթութիւնները հարաւէն եւ արեւմուտքէն արշաւողներու դէմ: Հայ ազգն աշխարհակալելու ոգի ունեցած է ցեղական բնագոյով, բայց իր սեփական ազատութիւնը, իր տանն անձեռնմխելիութիւնը, ամէն գնով գիտցել է պաշտպանել: Արայի հետ մէն մի հայ զոհեր է իր կեանքը փառաց դաշտի վրայ պատին ու համբաւը չարատաւորելու համար. նահատակուել են հայրենիքի պաշտպանութեան երգն երգելով:

Ինչ. Գրաւոր պատմութիւնը ցոյց կու տայ որ Հայերը՝ Փոքր Ասիոյ ժողովուրդներու հետ միշտ յարաբերութեան մէջ զբաղուած են զէնքով, վաճառականութեամբ և առանց խորշելու օգտուել են անոնց քաղաքակրթութենէն, որ յոնիական ազդեցութեան տակ կը գտնուէին իբրեւ աւելի մերձաւոր զբաղմունք: Հայերն ազդուել են բնածին բերմամբ, առանց մասնաւոր ջանքերու: Հին պատմագիրները Հերոդոտոս, Քսենոփոն, Վետրուվիոս և այլք՝ նկատել են Հայերու և Փոնտացեաց տուներու, զէնքերու և զգեստներու նմանութիւն. ուրեմն կարելի է ըսել նաեւ գեղարուեստի մէջ ալ, որովհետեւ զէնքեր՝

զգեստներ գեղարուեստի մասն են, ինչպէս նաեւ տունը. տան մը շինութիւնն այլ և այլ կերպով, ոճով և ծրագրով կը կազմէ ճարտարապետական կարգի առաջին քայլը, և քարագործի մը իսկական արուեստը:

Ուրիշ տեղ յիշած ենք որ փոխգաղան ճարտարապետութիւնն ըմբոստ գտնուած է և ինքնուրոյն՝ յունական ճարտարապետութենէն. և այդ հոգին որ օտար էր Հայէն, պիտի առաջնորդէ Հայ քարագործը՝ մինչեւ կեդրոնական գմբէթաւոր շինուածոց կանգնումն Հայաստանի հողին վրայ:

Սակայն քաղաքական կեանքը չէ միայն որ կ'ազդէ գեղարուեստի վրայ, այլ նաեւ հոգեկան աշխարհը մեծ դեր կը խաղայ, կրօնական զգացումներն և անկից ծագած գաղափարները մեծ ազդակներ եղած են գեղարուեստի զարգացման մէջ, և գրաւեր են ազգի մը հոգին: Աչքի առջեւ ունինք Եգիպտական և Յունական գեղարուեստը, նա գեղեցկութեան և կատարելութեան յաղթանակը տարած է վսեմակերտ տաճարներու, մեհաններու եւ կուռքերու արձաններու ստեղծագործութեան մէջ, եւն. Ուստի մենք ալ Հայու ճարտարապետական զարգացումը, որով հասաւ գերագունին (sublime)՝ օղապարիկ գմբէթին, քաղաքականին հետ կը վերագրենք Հայ ժողովուրդի խոր համոզմունքով անկեղծ աստուածաշարժութեան և կրօնական մաքուր զգացումներուն: Գերբնական հաւատքն է որ թէ հոգեկան և թէ բարոյական կեանքը կը զօրացնէ, կը լուսաւորէ միտքը. հաւատքն է որ ներշնչեց հայ ճարտարապետներուն, առանց նախընթաց օրինակի, կառուցանելու հոյակապ տաճարներ իր պաշտած Աստուծոյն:

Հին Հայերն անգամ, քրիստոնէութենէ առաջ, օգտուել են Հնդկ-Աւստրալական ժողովուրդի գեղարուեստական ստեղծագործութիւններէն: Բանաստեղծութեան և երգի ճաշակը, որոնց հետքը կ'երեւի մեր ճարտականներուն և եղանակներուն մէջ,

արիական արուեստն է. հայկական տաղաչափութիւնը պահեր է բան մը հնդկ արուեստէն, վեշտասանտոնեան դիւցազնականը, սեփական իմն է որ արեւմուտք չունի:

Մինչեւ Արշակունիներու մուտքն ի Հայաստան, յայտնի է որ հայ դիցաբանական պաշտամունքը Բնութեան արարչին նուիրուած էր, որուն խորհրդանշին եղած է «սուրբ հուրն» որ կը վառէր շարժամտին վարսաւոր ծառերու տակ և բլրան գլուխ հաստատուած Բագնին վրայ, ուստի անուշաբոյր ծուխն երկինք կը բարձրանար հաշտիք էին, զոհեր կը մատուցանէին. հեթանոս քուրմերն՝ երկսեռ երիտասարդութեան հետ մերն՝ երկսեռ երիտասարդութեանց պարելով և երգելով զոհագործութեանց տօնախմբութիւնը կը կատարէին: Սոյն այդ հեթանոսական սովորութիւնը այսօր կը կատարուի կիրակնամտի երեկոյին քահանայի խնկարկութեամբ, զոր ժողովուրդը հեշտիք կը կոչէ դեռ և հաւատացեալը մատաղ կը կտրեն եկեղեցւոյ առջեւ: Մեծ հանգէտներու ժամանակ, տաղաւարներուն, եկեղեցւոյ դպիրներն հոգեւոր երրուն, եկեղեցւոյ փափաքով ալ կը պարէին, որոնց դէմ կը չարանայ Բիւզանդի վարուն. իսկ զուարթացած Հայաստանի սիրտն ի վեր ամբառնալով՝ օգնութեան կը կոչէ հրեշտակները մասնակից լինել Ս. Եկեղեցւոյ ուրախութեան. «Այսօր Տէրն մեր յարեաւ, եկայք պարեցուք ընդ հրեշտակս. յաղթական երգով օրհնեցէք... Այսօր նոր խարայէլ կոչեցեալ ի Քրիստոս, ազատեալք արեամբ գառինն Աստուծոյ, պարեցուք ընդ երկնայնոցն՝ ասելով Քրիստոս յարեալ ի մեռելոց... Դեռ ուրիշ հեթանոսական տօներ և ծէսեր, Ս. Գրիգորի հրամանով, փոխանակեցին նորահաստատ քրիստոնէական կրօնքին յարմար արարողութիւններով:

Եթէ մենք կ'ափսոսանք հեթանոսական երկասիրութեանց ջնջումն իբր Գր. Լուսաւորչի ձեռքով, գէթ երգեցողութեան մասին շատ ցաւելու բան պիտի չունե-



նանք, եթէ այսօր քաջ հայ երգահան մը ինքզինքը նուիրէ մեր Շարականներու և մեղեդիներու ուսումնասիրութեան՝ պարզելով և թափելով մահմետական, պարսիկ և թուրք թուլամորթ մանկերու ծանրաբեռնութենէն, և անշուշտ մենք կ'ունենանք այն եղանակները զրեթէ հարազատութեամբ, ինչ որ երբեմն Անահիտի, Վահագնի և Տիւր զից ամանորայ տաճարներու ներս ու դուրս պարելով կ'երգէին Տիրացուներն աշխարհախումբ տօներու ժամանակ։ Երեւակայութեամբ չէ որ կ'ըսեմ ասիկա, այլ երկար տարիներ ժողովուրդի մէջ ապրած ժամանակս ներկատած եմ և գտած շատ մը պարերու եղանակներ՝ ճիշտ որ համապատասխան երաժշտական չափեր և շեշտեր ունէին Շարականներու եղանակներու հետ։ Սեպտեմբերի վերջերի Ս. Գէորգի տօնին, Ս. Էջմիածնի համաշխարհի ուխտաւորներուն մէջ, շինականները կ'ըսէին թէ՛ լաւագոյն քաղաքն ասողները կողքայ աղջիկներն էին։ Երգը ազգի մը հոգին է, որ չի մեռնիր։

Ի՞նչ ինքզինքնու Ռիկ-Վետայի մշակոյթին զուգահեռական կրնայինք շարայարել Հնդկ-Իրանեան կամ Պարսկական մշակոյթի ազդեցութեան մասին Հայաստանի վրայ, բայց աւելորդ կը համարինք, վասն զի կանխաւ լեզուական և գեղարուեստական տեսակէտով ուրիշ գիտնականներ քննենք և ըսեն են շատ բան, և ցոյց տուեն են թէ Իրանի ազդեցութիւնը որքան թափանցեր է հայու լեզուին մէջ։ Արդարեւ ոչ մէկ պետութիւն Իրանէն աւելի պիտի կարենար զբաւել Հայու միտքը, քանզի ցեղով և լեզուական յատկութիւններով մերձաւորագոյն եղած ենք. և սակայն այնպէս չէ եղած. և դրա պատճառը եղած է անտրամաբան ոյժը։ Վասն զի, ըստ մեզի, Պարսիկ ազդեցութիւնը բռնի մտած է, տիրապետողի մը պարտազրութեամբ և ոչ կամօք և հաճութեամբ, երկրորդ մեծագոյն խոչընդոտը՝ կրօնական խտրութիւնն եղած է, որ Հայը կը գտնէր Մոգերու օրէնքէն։

Հայերը թիպէթի անապատականներու

վարդապետութիւնը սիրով սրտով ընդունեցան ուստի և սիրայօժար կերպով յարեցան անոնց մշակոյթին, գրականութեան, և դասնութեան։ Ներդրամութիւնը կը թովէ Հայը, իսկ խստութիւնը կ'ըմբոստացնէ։ Ռիկ-Վետայի վարդապետութիւնը կը սորվեցնէր միաստուածութիւն՝ որ բնութեան արարիչն էր, որուն գոյութիւնը և յաւիտենականութիւնը արարածները կը քարոզէին։ Հայերն ընդունուած էին այդ կրօնը և գոհ էին, ու կը խորշէին իրենց արեւմտեան ազգակիցներէն, որոնք թողած Արարիչը՝ արարածոց և կոռոց երկրպագութիւն կ'ընէին։ Այսպէս գնացին Պարսից հետ ալ մինչեւ Կիւրոսի ժամանակ, որուն հետ սերտ բարեկամութիւն պահեցին Հայերը և Տիգրան Հայկազն։ Բայց երբ Դարեհ յաջորդեց Կիւրոսի անսահման իշխանութեան, միապետական տենչանքներով փրցած, բացարձակ իշխանութեան հետամուտ եղաւ ինքզինքն Աստուծոյ փոխանորդ կամ տեղակալ հրատարակել տալու, որպէս զի հպատակներէն երկրպագութիւն (adoration) պահանջէ. այս իր անիրաւ և մեղապարտ ըզրից թարգման գտաւ երկրորդ Զրադաշտ Մոգը, որ հերձուած մտուց Հինդուներու կրօնքին մէջ. յղացաւ խորոյ և չորի հակամարտ սկզբունքները, և անօրէն այլարանութեամբ Բնութեան արարչէն, բարւոյ և չարի ծնունդը դրաւ, մարդը և գործերը՝ հարկի տակ ձգեց, որով մարդ չարը գործելուն՝ ազատ էր պատասխանատուութենէ. ջնջեց անձնիշխան կամքը։ Կուրաց միտքը խաւարեցնելու համար, երկուորեակներն Որմիզդ - Բարին, Արհմն - Զարն ստեղծող և պաշտպան և հակառակորդ դրաւ արարածներուն։ Դարեհ՝ բնականաբար ընտրեց Բարւոյ կողմը, Որմիզդին հպատակեցաւ և Իրանեաններու խորհրդանշին եղաւ Արեգակը. իսկ Զարը՝ վիճակեցաւ Տանիրան ազգերուն, խաւարի և զիշերի իշխանութեան՝ Արհմն, որուն խորհրդանշին եղաւ Լուսինը։

Զրադաշտ Մոգը խարդաւանելու համար զԴարեհ, Միհրական կրօնքն հա-

տատեց, և ըստ նմանութեան արեւին որ միահեծան տէր է երկինքը, որուն երեւելուն լուսինը և աստղերը կը խաւարին. Դարեհի ճաշակին յարմար կը քարոզէր և կը սորվեցնէր թէ՛ ինքնակալն Աստուծոյ իրաւունքով կը թագաւորէ, կ'իշխէ և կը կառավարէ և ոչ թէ ժողովուրդի կամքով գահ կը բարձրանայ։ Այս է պատճառը որ կայսերական հեթանոս Հոմը, որիշ օտար կրօնքներ և աղանդներ հաւածեց և արտաքսեց քաղաքէն, բաց ի Միհրականէն (Mitra) որովհետեւ ասոնց մոգերն յայտնապէս կը սորվեցնէին (կեղծաւորութեամբ) թէ «աստուածային կայսերաց իշխանութիւնն յիւրաւանց աստուծոյ է». և այդ է պատճառը որուն համար կը բռնադատէին քրիստոնեաները կայսերաց արձաններուն զոհել և խունկ մատուցանել ի նշան ուրացութեան. կայսեր ենթապաշտօնեաները շատ աւելի խիստ և զգոյշ էին կայսեր պաշտամունքին քան զի Ծերակոյտն անոր ձեռքէն առեր էր իշխանութեան բանալիները, և կը շնորհէր երբ և որքան ժամանակ յարմար դատէր։ Կալիքուլայ մը աւելի նախանձախնդիր եղաւ իր անձնական փառքին և իշխանութեան քան Կալիքուլայի կամ Ուրմիզդի երկնային աստուածոց և աստուածուհեաց։

Մեր այս համառօտ խոտորումէն յետոյ վերադառնալով Դարեհի, նորա ամբարտաւանութիւնն եղաւ պատճառ կրօնական բաժանման Պարսից և Հայոց միջեւ, որոնք ի սկզբանէ Աւեստայի բնական կրօնքին յարած՝ միադաւան կը համարուէին. այն ժամանակէն սկսան իրենց մէջ կրօնական կոիւններն և հալածանքները՝ որոնք պիտի տեսնէին մինչեւ Պարսից իշխանութեան անկումը Արաքսոյ ձախճով Յազկերտ Գ. օրով (662 թ. Յ. Ք.)։

Աւեստայի գրքին մէջ կարգ մը երկնային բարի ոգիներ կային, որոնք Դիւ կը կոչուէին, անոնցմէ Արարիչը կարգեր է մարդոց պահապան։ Իսկ Զրադաշտ մտուց հրեշտակ անունը, իբրեւ գերագոյն

սպասաւոր Բարի Աստուծոյն՝ Որմիզդի. իսկ Դիւ կոչումը վերագրեց չար ոգիներուն, Զարի աստուծոյն՝ Արհմնի սպասաւորներուն։ Արդ, երբ Դարեհի ժամանակ կրօնական բաժանումն առաջ եկաւ, երբ Հայերը մերժեցին արարածոց՝ Արեւին երկրպագութիւն մատուցանել, ուրեմն հեռացան Որմիզդ բարի արարչէն, և շարունակեցին հետեւիլ Մահադեւա, այսինքն կոյս Անահայ պաշտամունքին, բայց որովհետեւ Անահայ Լուսնի անձնաւորութիւնն էր, և Լուսինը՝ Մոգեր չար Արհմնի արարած կը դնէին, ուստի Դարեհ չկարենալով Հայերը դարձնել իր նոր կրօնքին, Որմիզդ՝ Արեւի երկրպագութեան, նախատելու համար Հայ ազգն ու Հայաստանը, Բիհիսդունի ապառաժներուն վրայ արձանագրել տուած է Արհմնի, Դիւապաշտ, զժողովուրդն և զերկիրն Արհմնի, որ բնաւ կապ չունի Հերոդոտոսի Արմենիոսի և Արմենիայի հետ, բաց ի պատահական նմանաձայնութենէ մը։ Անոնց Արմենիոսն եղած է Արգոսէն, իսկ մեր Անահայը դրախտի գետերէն բխած է, որոնք վիշապօրէն սողոսկելով դաշտերու մէջէն և զալարուելով խոխոմներու մէջ, կենդանութիւն կը սփռեն երկրին և պտղաբերութեան պատճառ են. «պաշտպան և կեցուցիչ Հայոց ազգին»։ Հայերը զանի համեմատեցին Լուսնին, քանզի արեւն անսահման էակին պատկերն էր. զիշերուան խորհրդաւոր երկունքէն բռնուած, ամէն առաւօտ վարդամառն պատշգամբէն կարմիր եղեգնիկէն հուր ու բոց կը շնչէ և անոր մէջէն շիկահեր և բոցավառ արեգակ մանկիկը դուրս կը թռչի։

Այսպէս սկիզբէն լարուած թշնամութեամբ Պարսից դէմ, դժուար թէ Հայերը անոնց մշակոյթին ենթարկուած ըլլան։


Թողլով գեղարուեստի միւս ճիւղերը, և խօսելով միայն ճարտարապետութեան մասին, ապահով կրնանք ըսել որ Հայը ոչ մէկ բան առած չէ Պարսիկէն, բան մը՝ որ պարսկական ըլլայ։

Արմենեանց տիրապետութիւնը կը հիմնէ Մեծն Կիւրոս, 550 Ն. Ք., յաղ-



Թելով Մարաց Դարեհ թագաւորին: Պարսից կայսրութիւնը 200 տարի տեւեց: Այդ դարուն, փոքր Ասիոյ հզօր թագաւորը Կրեսոս, Սարդիկէ մայրաքաղաքը գեղեցիկ շէնքերով զարդարած էր եւ արքունիքը՝ գեղարուեստի թանգարան մը յօրինած էր: Արդ երբ Կիւրոս Հայոց օգնութեամբ յաղթեց Լիդիոյ թագաւորին Կրեսոսի՝ եւ իր իշխանութիւնը տարածուեցաւ ամբողջ Յոնիոյ եւ հանդիպակաց կղզիներուն վրայ,

մերու վրայ նման մը կանգնեց: Ասոր համար Կտեսիաս պատմիչը կ'ըսէ թէ՝ փոքր Ասիոյ Յոյներու ոճով շինուած է (du style grec de l'Asie Mineure): Տարակոյս չի մնար յունական ճաշակով շինուած լինելուն. այն ատեն տարբերութիւնը կը զգացուի երբ ուշադրութիւն դարձուի Պազարկաղու եւ Պերսեպոլիսի մէջ գտնուած շարք մը գերեզմաններու վրայ որոնք տեղական արուեստով եւ ճաշակով



Նեղոս, Եգիպտոսի կեցուցիչը, իբրեւ մայր մը՝ որ իր ջրերով կը սնուցանէ երկրին ժողովուրդը: Ան խորհրդանշան մ'էր վիշապներու պաշտամունքին: Հայն ալ Անահիտն ու Դրախտի գետերը այսպէս պիտի ներկայացնէր՝ եթէ մշակած ըլլար անգրիսագործութիւնը:

ուր գիտութիւնը եւ գեղարուեստ ծաղկած էին, եւ չէին պակսեր քաջ քարագործներ եւ արձանագործներ: Կիւրոս ազդուելով Յոնիական ճաշակաւոր շինութիւններէն, իր վերադարձին հետը տարած է գերիններէ զատ նաեւ արուեստաւորներ՝ եւ ձեռք զարկած է այլեւայլ շինութիւններու, որոնք այսօր աւերակներ են. առաջինն է Կիւրոսի գերեզմանը Պազարկաղի մէջ, որուն համար Ստրաբոն կ'ըսէ թէ Արիստոբոլ՝ Աղեքսանդրի հրամանով նորոգեց — ինչ է այս նորոգութիւնը, խախտածները եւ կոտորածները շտկեց, թէ հին հի-

շինուած են: Երկրորդն է Դարեհի դամբարանը, բոլորովին տարբեր ոճով, աւելի եգիպտական տիպար ունի եւ կարելի է ըսել որ բան մ'ալ փոխական դամբարաններուն նման. Եգիպտականին ճարտարապետական նմանութիւնը կը գտնեն փորակին մէջ (la gorge) որ դամբարանին դրան վերեւ կը գտնուի: Աւելի հաստիք կրնան ընծայել Միլետացի եւ Երիտրիացի քաղաքացի եւ գերինները զորս Դարեհ եւ Քսերքսէս տարին բնակեցուցին Պարսկաստան եւ Մարաստան իրենց հիմնելիք շինութեանց վրայ աշխատողներ:

լու նպատակով, եւ միանգամայն շինարարութեան եւ քարագործութեան արուեստը սորվեցնելու տեղական ժողովուրդին: Կիւրոս իր ցաւոտ աչքերուն համար Եգիպտոսէն ափնարոյժ հրաւիրած էր, Դարեհ հետը միշտ յոյն բժիշկներ կը պտըտցնէր, ուստի ինչ զարմանք որ այսօր հնագիտութեանց խուզարկուները Պարսից արուեստին մէջ նմանութիւններ կը գտնեն Նինուէի, Եգիպտոսի եւ Փոնիգական յիշատակարաններու հետ: Զարմանալի է որ Դանիէլ մարգարէն անգամ ճարտարապետներու կարգին մէջ կը յիշուի, եւ Նօշի թագաւորական պալատներուն եւ թագաւորաց շիրիմներու շինող կը համարուի: Եւ հաւանական ալ է, վասն զի վերեւ յիշեցինք որ տեղական շիրիմները կը տարբերին Կիւրոսի վերագրուած շինութիւնէ:

Մեր հետամտութիւնն իսկապէս գմբէթի ծագումը ճշդելն է, ուստի հետաքրքրական է մեզ, քան այլ ամենայն Պարսկական շինուածները, Սարուիստանի նշանաւոր աւերակները, յորում կայ Պարսկական գմբէթի առաջին օրինակը: Ոմանք ըսին որ ան Հայ քարագործին օրինակ ծառայած է. սակայն ոչ: Մենք նախ դիտել կու տանք որ Սարուիստանի գմբէթը կը հանգչի քառակուսի սրահի մը որմերուն վրայ. անկիւններէն քաղելով եւ վրայ բերելով ձեւացեր է կողովի ձեւով գմբէթ մը բոլորովին աննման երկրաչափական կլորակ պսակի վրայ դրուած այն զրմբէթին՝ որ կը հանգչի չորս կամարներու վրայ, որոնց չորս քառանկիւնի դատարկութիւնը լցեր են փոսորակ թեւերով (pendentif): Սակայն պատմութիւնն ասոր շինութիւնը Պարսիկ թագաւորներու չ'ընծայեր, այլ Պարթեւ. եթէ ուզէ որ Արեւմտեանց վերագրել, անոր ալ հակառակ ապացոյց կայ ճարտարապետական զարդ մը որ Եգիպտական է (փորակն), եւ կը հաստատեն որ կամարակապի բերած գերիններու ձեւըով շինուած ըլլալու է, ուրեմն Պարսկական չէ:

Ի՞նչ հնդիրանեան շրջանին, յաջորդեց

Մեծն Աղեքսանդրի բերած հելլէն մշակոյթը, Արեւելայի յաղթութենէն յետոյ 331 թ. Ն. Ք. եւ հարկ է դիտողութեան առնել թէ որքան եւ ինչ բանի մէջ օգտակար եղաւ Հայաստանի:

Հայկական մշակոյթի վրայ ճառող ազգայիններն եւ օտարներն՝ եւս առաւել, համրիչ քաջողներու պէս կը կրկնեն ինչ որ առաջիններն ըսած են, թէ՝ Աղեքսանդրի տիրապետութիւնը եւ յաջորդներուն՝ Յունական մշակոյթին ենթարկեց նաեւ Հայաստանը եւ անոր ազդեցութեան հետեւանքն է Հայ ճարտարապետութեան յղացումը եւ գործադրութիւնը: Բնաւ: Ընդհանուր գծերու մէջ կայ ճշմարտութիւն մը, որ Յունական քաղաքակրթութիւնը շատ աւելի դիւրամարս եղաւ Հայոց քան Քաղդէացոյց եւ Պարսից, չնայած որ Աղեքսանդր եւ իր յաջորդներն ուղղակի գործեցին ասոնց երկրի եւ ժողովուրդներու մէջ: Ընդհակառակն կարող ենք ըսել որ Մակեդոնական ուղղակի տիրապետութիւնն այդ երկիրներուն վրայ փնասակար եղաւ, վասն զի քանդեց եւ փճացուց Քաղդէական եւ Արեւմտեան ինքնուրոյն եւ ազգային զարգացումը կամ մշակոյթը, եւ չյաջողեցաւ պատուաստել Հելլենականութիւնը: Մինչդեռ Հայաստան կառավարուելով բնիկ նախարարներու եւ իշխաններու ձեռքով, կրցաւ ազատ կերպով օգտուիլ այն չափով որ իրեն տանելի էր եւ յարմար կու գար ազգային աւանդութեան, որով կը հաւանինք որ Յունական քաղաքակրթութիւնն ունեցաւ իր բարբարոս օգուտները գեղեցիկ դարութեան ճաշակն առնելու եւ քաղաքականապէս կազմակերպուելու, բաց ի ճարտարապետութենէն որ միշտ պահեց Փոնիգական ոգին եւ միշտ ըմբոստ գտնուեցաւ Արեւմտեան ազդեցութենէն: Մակեդոնացի զօրավարները իրենք զարգացած մարդիկ չէին որ կարենային պիտանի ըլլալ ժողովուրդին զարգացման. կը նմանէին թաթար խաներուն որոնք զիտեն քանդել եւ սպաննել, եւ ոչ շինել եւ կեցուցանել: Պատմութիւնը չի յիշեր որ Մակեդոնացի կուսակալներ՝



Նէոպոլիտէոս կամ Եւմենէս, Աղեքսանդրի գրագիրը, ըսել է գրական մարդ մը, ուսմանց և շինութեանց հոգ տարած ըլլան ծաւալելու Հայոց մէջ: Ընդհակառակն կը տեսնենք որ անոնք թշնամի են Հայոց կիսանկախութեան և հետամուտ են մէջտեղէն վերցնելու Հայ իշխանները և երեւելի նախարարները: Արդուարդ (Եղուարդ) իշխանը, երեւի Հայկազանց թագաւորներու սերունդէն, հազիւ կը ճողոպրի Եւմենէսի լարած որոգայթներէն և կը փախչի, շունչն Արշակունիներու արքունիքը կ'առնէ. նմանապէս Բագարատ իշխանն ալ, քրմական ազնիւ տոհմէն, կեանքն ազատելու համար Արշակի արքունիքը կ'ապաստանի: Ասոնք երկուքը վրէժխնդրութեան ոգով լցուած, կը վառեն Արշակ մեծի սրտի կրակն ընդդէմ Մակեդոնացւոց, համոզելով զինքը որ Հայաստան իր քայլերուն պիտի հետեւի:

Յունական ազդեցութիւնը, ճիշտն ըսելով, այն ատեն պողաբեր եղաւ Հայաստանի համար, երբ Պարթեւաց իշխանութիւնը կիւրոսի և կրեսոսի աշխարհակալած երկիրներուն վրայ տարածուեցաւ. այդ շրջանէն կը սկսի Հայաստանի մէջ Հնդկներէն ժառանգած քաղաքակրթութիւնն ու մշակոյթը, շփմամբ Յունական դասական զարգացումին, նոր եռանդ մը և խանդ զարթուել Հայ երիտասարդութեան սրտին մէջ դէպ ի գեղեցիկ դպրութիւններն եւ գեղարուեստը: Վաղարշակի արքունիքն այն ազդեցութիւնն ունեցաւ որ չար Հայաստանի վրայ, ինչ որ կը գրեն Լուդովիկոս ԺՎՊ բանեցուցած ազդեցութիւնը իր դարուն վրայ: Վաղարշակ իր թագաւորութեան քսանեւերկու տարիները ի գործ դրաւ շինել և շտկել Արեւմտեանց և Սելեւկեանց բոլոր գործած աւերումներն Հայաստանի քաղաքական կազմութեան և ժողովրդական բարեկարգութեան մէջ: Հայոց Սողոմը կամ Նուման, փոխառնելով Խորենացւոյն խօսքերը. «Նախ և առաջին օրինադրէ զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի զլիսոյն իւրմէ եւ ի թագէ»: Ապա կը վերահաստատէ խաթա-

րեալ Նախարարական տուները, ըստ հին նախնի աւանդութեան: Գեղեցիկ դպրութեանց վերսկսելու նշան մը կարելի է նկատել այս խօսքերուն մէջ զոր կ'ըսէ Խորենացին. «Եւ կարգէ յիշեցուցանողս երկուս ի ձեռն գրոյ, այլ ոմն զբարի յիշողութիւնն առնելով, և այլ ոմն զվրէժխնդրութեան... իրաւարարս ի տան արքունի, իրաւարարս ի քաղաքս և յաւանս»: Ասոնք որոշ զարգացում մը և կրթութիւն ստացած ըլլալու էին, հրահանգուած բարձրագոյն կրթութեամբ, որ կարենային դատաւորի, փաստաբանի եւ դիւանապետի պաշտօններ կատարել:

Արշակունեաց թագաւորութեան սկզբնաւորութիւնը, կազմութիւնը և յառաջագիւծութիւնը, տարակոյս մը ծնոյց մտքիս մէջ, արդեօք Պարթև համարուած Արշակունիք ալ Հայ չէ՞ին: Վաղարշակ՝ Քուշան չ'երեւիր, այլ Հայկազանց թագաւորներու սերունդէն իշխան մը, որդի կամ թոռնայն Միհրդատ Նախարարին, որուն Դարեհ յանձնէր էր Պերսեպոլսոյ պաշտպանութիւնը, և նա Դարեհի մահէն յետոյ քաղաքն եւ արքունի գանձերն յանձնեց Աղեքսանդրի: Միհրդատ շատ դժուար թէ Պարսիկ ըլլար, ապա թէ ոչ Աղեքսանդրի գանի ինքնագլուխ Նախարար կամ կուսակալ չէր կարգեր Հայաստանի վրայ: Այդ վստահութիւնը ներշնչած է Կալլիսթոնէս, Դիւցազնի վիպագիրը, որ քաղելով Հերոդոտոսէն, Քսենոփոնէն և այլ ժամանակագիրներէ, հասկցուցած է Դիւցազնի, թէ Փոքր Ասիոյ Փոլիզացիները Հայաստանի Միջագետքի և Վերին Սիւրիոյ բնակիչներն հին Արիական ցեղին կը պատկանին, ինչպէս Յոյներ և Հելլէն ազգեր, որոնք Պարսից բռնութեան տակ կորուսին իրենց բնիկ ազատութիւնը, և հիմա անոնք Աղեքսանդրի վրայ կը նային իբրեւ ազատարարի մը, ուստի ողջունեցին անոր իշխանութիւնն իբրեւ իրենց համարիւթ թագաւորի: Արդարեւ Աղեքսանդր մայրն գրած նամակի մէջ Հայաստան չի յիշեր ի շարս նուաճուած ազգերուն: Աղեքսանդրի յաջորդները ծուռ աչքով նա-

յեցան անոր այս առանձնաշնորհութեան վրայ. ուստի Դիւցազնի մահէն յետոյ կամ Չմիհրդատ վար աքին կամ անոր մահէն յետոյ Չմիհրդատ Յոյնը կուսակալ նշանակեցին, այն ժամանակ որ Հայ իշխանն Արդուարդ ինքնագլուխ Հայաստանի մէկ մասին վրայ իրեն ուժով կը տիրէր: Սելեւկոս ատոր ալ նախանձելով, զԵւմենէսը կը նշանակէ և կը յանձնարարէ որ մէջտեղէն վերցնէ Հայ իշխանը: Սա իր կեանքն ազատելու համար, ինչպէս ըսինք, փախած էր Բակտրիա Պահլաւներու մօտ. և մինակ չէր, այլ Հայոց իշխաններու ընտիրն և ամենահին ընտանիքը, որուն կը պատկանէր նաեւ քրմական պաշտօնը, Բագրատունի իշխանը Բագարատ, նեղուելով Եւմենէսի կռիւնէրէն Կապադովիոյ և Պոնտոսի կողմերը, Տայոց աշխարհի մէջ, սա եւս խոյս կուտայ Արշակ Մեծի արքունիքը, ուր կանխաւ Արդուարդ ապաստանէր էր: Արշակ Սելեւկեանց դէմ վճռական կռուի պատրաստուած ժամանակ, տարակոյս չկայ որ արքունիքի մէջ եղած Հայ իշխանները, իրենց տոհմայիններու, Հայ իշխաններու գործակցութեամբ, Հայերը կը պատրաստէին նիգակակից լինելու եւ կռուելու միասին Մակեդոնական տիրապետութեան դէմ: Այս պարագաներու մէջ Արշակ Մեծն ապահովելու համար Հայաստանի դաշնակցութիւնը, առաջին Հայ իշխանն Հայկազանց սերունդէն, անունը փոխելով, իր անունը անոր կու տայ և ազգաւ կը գրի արշակունի՝ Վաղարշակ: Եւ մեզ թուի թէ ոչ Արշակի հարազատ եղբայրն է, այլ ըստ բնութեան որդեգրութեան՝ կոչի եղբայր: Վաղարշակի վերագրուած նամակի ոճն և լեզուն կարծիք մը չէ, այլ ենթակայի մը. երբ կ'ըսէ. «Գի գտեալ զըդձալին եղբոր քո և ՈՐԿԻՈՅ»: Խորենացին յայտնապէս կը գրէ Բագարատ մեծ իշխանին համար թէ Արշակ Մեծի պատեւազմի սկսելուն «նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ», որ է ըսել՝ պայմանադրութիւն մը եղած է երեքին միջեւ և Բագարատ ինքզինքն

կ'ընծայէ Վաղարշակի ծառայութեան, ճանչնալով զանի բնիկ հայկազուն թագաւոր Հայաստանի: Բուզանդ անգամ գոցեա մեր ենթադրութիւնը կը հաստատէ, երբ Հայ նախարարներն հակառակին կամ ապստամբին իրենց Արշակունի թագաւորներէն, նա շարունակ կը կրկնէ իրենց «բնակ տերանց արշակունեաց»: Եւ Խորենացին ալ նոյնը կը հաստատէ երբ կը գրէ. «Երկրորդեմք այժմ քուս հարցասիրութեանդ, ձգելով ԶՄԵՐ ԲՆԻԿ Նախարարութիւնս մինչեւ ցՍարգանաբալ»: Ուրեմն Վաղարշակ Պարոյր Հայկազնի սերունդէն, Բագարատ Բագրատունիի հետ, պատերազմով կը մտնեն Հայաստան և կը վերահաստատեն վաղ կամ նախնի Հայոց թագաւորութիւնը՝ համապատիւ Պահլաւ Արշակունի թագաւորներուն, պահելով մէջ ջերին կարայրական կայր:

Դարձեալ Վաղարշակի ցոյց տուած մտաւորական կարողութիւնները, որով երկիրը բարեկարգեց ըստ քաղաքականին և ըստ կրօնականին, կը գերազանցէ քան այն բուն Պահլաւ Արշակունիներն որոնք Արշակ Մեծէն սկսած մինչեւ Արտաւան թագաւորեցին Պարսկաստանի վրայ:

Դարձեալ յայտնի է անոր հայազգի ըլլալն այն պարագայէն որ Վաղարշակի յաջորդներն Արշակ, Արտաշէս, Տիգրան յաջորդներն հելլենասէր կը դառնան և յամենայնի հետամուտ արեւմտեան քաղաքակրթութեան:

ԽԹ. Հայաստանի ծայրագաւառներու Նախարարները միշտ յարաբերութեան մէջ մնացին իրենց համացեղ Փոքր Ասիոյ ժողովուրդներուն հետ, որով դէպ ի հելլենական քաղաքակրթութիւնն համակրութիւն կը տածէին Մեծին Աղեքսանդրի արշաւանքէն իսկ առաջ:

Բայց Հայը միշտ զգոյշ կերպով օգտուելով, կը կազմէր ինքնուրոյն մշակոյթ և գեղարուեստ, որ կը կրէր զուտ հայկական տիպար կամ նկարագիր: Այնպէս

1. Այս սովորութիւնը պահեցին յաջորդ արշակունի թագաւորներն ալ:




որ Հաթթիններու Բողազ-քէօյի (Պեղա-  
գեանց?) գրատան յայտնութիւնը, այդ  
արձանագրութեանց ընթերցումը, շատ նոր  
բան չբերաւ աշխարհը. որովհետեւ մեզ  
կը թուի որ Հերոդոտոսէն սկսած և ապա  
Քաղդէացի կամ այդ կողմերու գիտնա-  
կանները, որոնց յայտնի էին այդ բեւեռա-  
գիր գրադարանները, Աղեքսանդրի հրա-  
մանով զանոնք թարգմանեցին յունարէն  
և ասորերէն լեզուներով. ոմանք ալ համա-  
ռօտութիւններ յօրինեցին և այսպէս դար-  
ձան հասարակաց սեփականութիւն հին  
նախնեաց գործերն և պատմութիւնները :  
Ուստի արդի գիտնականներն և Հիթիթ-  
ներու թողած մատենագրութեան ընթեր-  
ցողները, անոնց բովանդակութիւնը կրնան  
գտնել հիներու քով, այսինքն այն գրա-  
կանութեան մէջ որ Ասորի և Յոյն գի-  
տուններու ձեռքով գրուեցան : Թէ ընդ-  
հանուր լեզու մը կը խօսուէր Հայաստանի,  
Փոքր Ասիոյ եւ Վերին Ասորիքի ժողո-  
վուրդներուն միջեւ. կը նպաստեն Պրն.  
Գաբրիէլ Միքայէլեանի Ասորիքի մէջ զրա-  
նուած հաթթեան գաղափարագրութիւնները  
հայերէնով մեկնելու ջանքերը (Հալէպի  
հնագիտական Հանդիսին մէջ) : Նոյնի հաս-  
տատութիւնը կը գտնենք Եպիփան պատմի-  
չին Դաստառակի պատմութեան մէջ, յո-  
րում կը գրէ թէ Եփրատական երկիրներու  
նախնի բնակիչներն Հայ եղած են, բայց  
յետոյ ենթարկուեցին Ասորւոց ազդեցու-  
թեան, մոռցեր են հայերէնը և կը խօսին ու  
կը գրեն ասորերէն : Ստրաբոնի ժամանակ  
Բողազ-քէօյի գրատունն արդեօք հետա-  
խաղաղ կորսուած էր. երբ այդ գիտնականը  
որ Փոքր Հայք և Ասիա մինչեւ Ասորիք  
ճամբորդեր էր և կը հասկնար այդ գա-  
նազան ցեղերու լեզուները, կը հաստատէ  
որ հայ բարբառին մօտիկ լեզու մը կը  
խօսէին : Տիգրան Մեծի տիրապետութեան  
շրջանին մինչեւ Սանատրուկի թագաւո-  
րութիւնն անշուշտ հայերէնի զարկ տուած  
են վերակենդանացնելու հայ լեզուն և զրա-  
րութիւնը, և ասոր համար է անշուշտ մի  
Դանիէլ ասորւոյ (իմա ասորախօս) աշ-  
խատութիւնը հայերէն գիր ստեղծելը այդ


ասորախօսներու համար, որոնք Մոփաց  
աշխարհէն անցնելով մինչեւ Տարօն —  
Խուրրի Հայաստան թափանցել էին :  
Արդ այդ ցեղերուն մէջ ուստի մնացեր  
էր այդ աւանդութիւնն իրենց ծագումին,  
եթէ ոչ շնորհիւ Ասորի և Յոյն գիտուն-  
ներուն որոնք հիներուն և նորերուն պատ-  
մութիւններն ամփոփեցին և զրին Եղեսիոյ,  
Մծբնայ, Պերգամոնի, Կեսարիոյ և Աղեք-  
սանդրիոյ Դիւաններուն մէջ. մանաւանդ  
վերջնոյս մէջ Պտղոմէոսի հռչակաւոր զը-  
րատան հիմնարկութեամբ, ուր Դեմետր  
Փաղերացւոյ ջանքերով հաւաքուեցան մօտ  
200,000 հատոր մատենները, ուր էր  
ԲԱԶՄԱՎԷՊ, որ Համայնագիտական բա-  
ռարան մ'էր, ուսկից ամէն աշխարհի ու-  
սումնասէր հոգիներ մեղուօրէն կը ծծէին  
և կը հաւաքէին իրենց փնտռածը : Ասկից  
պիտի օգտուի նաեւ Աղեքսանդրեան ճե-  
մարանին անդամակցութեան զրուած մեր  
Խորենացի պատմահայրը : Երկրորդ հռ-  
չակաւոր էր Եղեսիոյ զիւանը, և կարե-  
ւորութիւն ստացաւ մանաւանդ Հռոմայե-  
ցոց ժամանակն, ուր փոխադրուեցան  
Սամուսատի (Ուրեգ քաղաքի) և Սինոպի  
զիւանները, ըստ վկայութեան Ափրիկա-  
նոսի : Խորենացին երկիցս յիշելով Սինոպի  
քաղաքի զիւանը, Մեհեհակաւն պատմա-  
րեանց մատուակը կոչէ :  
Մեհեհակաւն պատմութիւններ կը հա-  
ւաքուէին թագաւորի մը հրամանով և կամ  
կը գրուէին և կը պահուէին արքունի դի-  
ւաններու մէջ : Արդ Բողազ-քէօյի աղիւս-  
ները կը համարուին Հիթիթներու թագա-  
ւորական գրատան հաւաքածոյ մը. բայց  
մինչեւ ցարդ ոչ մէկ քաղաքի կամ ար-  
քունի ոստանի մը հետք գտնուած չէ,  
ուստի մեր միտքը կը սլանայ դէպ ի Սի-  
նոպ, որ արժանի էր մայրաքաղաք ըլ-  
լալու ծովահայեաց զիրքով և գեղեցիկ  
նաւահանգստով, և հոն՝ արդարեւ պատ-  
մութիւնը կը յիշէ թէ կար մատենադարան  
և զիւան մը մեհեհակաւն պատմութեանց :  
Բողազ-քէօյի աննշան տեղւոյ մէջ զըտ-  
նուողներուն համար կարելի է ենթադրել  
թէ զիւանի փոխադրութեան ժամանակ

զփուարութեանց հանդիպելով տանողները,  
այդտեղ եղած է հանգոյց մը, սուրհան-  
դակի հանգրուան, թողեր են առժամա-  
նակեայ կերպով, բայց յետոյ մոռցուեց  
է և թաղուեց աւերակների և հողի տակ :  
Ինչ որ ալ ըլլայ Հիթիթներու տիրապե-  
տութիւնը Փոքր Ասիայէն մինչեւ Ասորես-  
տան այսօր մասնաւոր կարեւորութիւն մը  
կը ստանայ պատմութեան առջեւ Բողազ-

կոչուած է. նմանապէս Հայաստանի մէկ  
մասն ալ Խուրրի կոչուած է, և բեւեռա-  
գիրներու մէջ ալ կարդացուեց է Հոռորա-  
տա : Ժողովուրդի աւանդութեան մէջ շա-  
րունակած է ապրիլ Հուրրի կամ Խուրրի  
անունը՝ մինչեւ Ե դար Յ. Գ. վասն զի  
Խորենացի կը գրէ թէ Մեծն Տիգրանի Փոքր  
Ասիայէն արձաններու հետ բերած քուր-  
մերը, չուգելով երթալ մինչեւ Խուրրի  
Հայաստան, ըղձութիւն կը պատճառեն,  
կը խարեն թագաւորը և կը հաստատուին  
Եկեղեաց գաւառին մէջ : Թէպէտ պատ-



Միկէնքի առիւծներու դուռ



Փոխ. մանրաձմեր առիւծներ Ասլամթաշի մէջ


քէօյի պեղումներով, և բոլորն ի միասին  
կը հաւաստեն Արիական ցեղի տարածում  
և անոր մշակութային ազդեցութիւնը Միջ-  
երկրեայց, Հայաստանի և Վերին Ասորիքի  
վրայ : Այս երեք երկրներուն մէջ միեւ-  
նոյն ցեղի տարբեր գաւառաբարբառներ  
խօսուած են : Ասորեստանցիք կամ Քաղ-  
դէացիք զասոնք Խուրրի կամ Հուրրի,  
(Ուրրի) կոչել են, և այդպէս ալ անցեր  
է պատմութեան մէջ. Վերին Ասորիք և  
Հայոց Միջագետք Խուրրի կամ Խորին

մութեան մէջ գրուի Խորին Ասորիք, կամ  
Խորին Հայաստան : Ոչ մին և ոչ միւսը  
Խորին են իբր ներքին կամ ստորին, այլ  
բարձրադիր և լեռնոտին : Թէ Հայաստան,  
երկու հազար տարի Ն. Գ., իրաւունք կը  
բանեցնէր կապաղովկիոյ Խուրրիներու  
վրայ՝ յայտնի է Արամ Նահապետի պատ-  
մութենէն, որ Փոքր Հայոց տիրելով մին-  
չեւ Ալիս գետ, Մաժակի բնակչաց կը  
հրամայէ հայերէն խօսիլ : Պէտք չէ մոռ-  
նալ հնագոյն մեծ ու փոքր ժամանակա-



գիր պատմիչներն որոնք անհետացած ազգերու և ցեղերու պատմութիւնը գրած են, առանց յիշելու բեւեռագիր աղիւսներ, անոնք ուսկից հաւաքել են այնքան անցքեր՝ որ անցեր են երկրիս երեսին: Անոնք բանաստեղծութիւն չեն գրած, այլ պատմութիւն, և օգտուել են անգիր կամ գրաւոր աղբիւրներէ. անգիր են վիպասանական կոչուածները, որոնք աւանդութեամբ երկար դարեր ապրել են ժողովուրդի բն-

Հայկական Ճարտարապետութեան նախատիպը, մենք ըսած ենք մեր նախնի մեծ յողումներուն մէջ, եղած է Հոմերական մեկտրոնը, Միկէնքի պեղումներուն մէջ գտնուած: Յիշեցինք նաեւ որ Մանեթոն Հիւքսոսներու ծննդավայրը կը դնէ Արգոս, ուսկից անոնք անցեր են թեսսաղիա և ապա թրակիա, հուսկ ըստ Հերոդոտեայ պատմութեան Հելլեսպոնտոսն անցնելով Տրոյիայէն սկսած մինչեւ Հա-



Միկէնքի Ատրէոսի գեղամասի շրջիմ

րանը, մինչեւ որ մէկը գրի առեր է. կամ գրաւոր, անոնք որոնք ամփոփուած են արքունի դիւաններու կամ մեհենական մատեաններու մէջ:

Մեր այսքան տարածուիլը փոքր մի հեռուները մեր ուղղակի նիւթէն, անոր համար է որ պարզենք թէ, զիցուք ճարտարապետական ուսումը հաւասարապէս մշակուել է վերոյիշեալ համացեղ ազգերուն մէջ, և իրենց մշակոյթի ազդեցութիւնը թողած են օտար ազգերու մէջ, զոր օրինակ Ասորեստանի, որ համեմատութեամբ մեծ եղած է և մեծ աւերակներ թողել է իր ետեւէն:

յաստան Փոլիագացի անունով ճանչցուել են: Փոլագացիք ստեղծել են ճարտարապետութիւն մը որ եղած է ինքնուրոյն Հելլենական ճարտարապետութենէն: Եւ արդարեւ տուեալներ ունին այս Փոլիական ըստուած ճարտարապետութեան որ Պեղոպոնէսէն գաղթող ժողովուրդը ցանկեր ցրուել է իր ճամբուն վրայ Միկէնքէն սկսած մինչեւ Նինուէ: Ահա Միկէնքի մէջ առիւծներու կոչուած դուռ մը կայ, որուն նման Փոքր Ասիոյ մէջ, Հայրան վէլի գիւղին մօտ, փոլագական գերեզմանի վրայ կան քանդակուած նոյնաձեւ առիւծներ (Ասլանթաշ): Դեռ աւելի հետաքրքրական


է այն որ նաեւ գմբէթի հանճարելը աւելի կանուխ կը գտնենք Արգիական ժողովուրդին մօտ: Դարձեալ Միկէնքի մէջ է Ատրէոսի գերեզմանը ստորերկրեայ գեղեցիկ շինուած. գմբէթը յունարէն թորոս կոչուած է. իսկ մեր Հայ ժողովուրդը թաղ կը կոչէ, յորմէ թաղել, թաղումն, այսինքն մեռելի վրայ կամար մը կը շինեն (թաղ կապել) և ապա հողով կը ծածկեն: Չագաբանման գմբէթներու պէս, Հայաստանի մէջ հորեր կը փորեն չոր հողի մէջ՝ ցորեն, գարի պահելու համար:

Հաթթիներու կամ Խուրրիներու ճարտարապետական ազդեցութեանը ենթարկուած են նաեւ Ասորեստանցիք. Խորասապատում՝ Սարգոնի մեծդի պալատին մօտիկ կը գտնուի փոքրիկ ամարանոցեակ մը, որուն մէջտեղին ընդարձակ բակ մը կայ չորս սիւներու վրայ, Ասորեստանցիք անոր ֆետա կամ Հիթիթեան ապարանք կ'ըսէին:

Արդ մեր եզրակացութիւնը յայնմ է որ առաջին անգամ Ասորեստանի շինութեանց մէջ սեւան գործածութիւնը կը մըտնէ, որ բնական և սովորական բան մ'էր Փոքր Ասիոյ և Հայաստանի ժողովրդեան մօտ: Ղարաբաղի (Սիւնեաց) ամարանոցներու մասին Պրոֆ. Ստ. Լիսիցեան գրած էր, որ ոռւսերէնէ թարգմանուելով Ղըրուեցաւ «Բագմավէպ»ի մէջ<sup>1</sup>, մեր կողմանէ տալով բացատրութիւններ քառատալի և Հայ գիւղական տան:

Մեր երկար գրութեան եզրակացութիւնն է, նախ որ Հայերն անկախ ուրիշ ազգերէ զարգացուցեր են իրենց երկրին մէջ գմբէ-

թի զաղափարը չորս անջատ սիւներու վրայ, որուն անպաճոյճ օրինակը կը տեսնուի հողածածուկ գմբէթաւոր տուններու մէջ:



Խորասապատի մօտ Հիթիթեան ապարանք

երկրորդ՝ հարեւան ազգերու զարգացումէն առաջ Փոլագացիք թէ գմբէթի և թէ անջատ սիւներու վրայ կառուցումը նախնական դարերէ սկսած կիրարկել են, և այդ նախապատմական զաղափարը սերունդէ սերունդ անցնելով, պահուել էր Հայու արեւան մէջ մինչեւ Գ-Ե դար գործադրութեան մտնելու կատարելագործուած ծրարով և արուեստով, երբ Հայու կրօնագրով և հոգւոյ եռանդն ստիպէ իր երկնաւոր կան հոգւոյ եռանդն ստիպէ իր երկնաւոր Հօր տունը երկնահանգէտ կառուցանելու, և հաճեցնելու զԱստուած՝ իր ձեռագործ Տաճարին մէջ բնակելու:

(Շարունակելի)

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

1. «Բագմավէպ», Հտ. 29. 1926, թիւ 12. «Ուսումնասիրութիւն Հայ գիւղի տան»:

